

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ք օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ՍՐԺՐՈՒՆԻ

Թիֆլիսի հայ հոգեւորականների Ազգահովութեան զանաւարտի վարչութիւնը որա-
նով յայտարարում է Թիֆլիսի հայ-հոգեւորական եւ աշխարհական դասին ի գիտութիւն,
որ նոյններին Եւֆրատի, Ամենայն Սրբոց տօնի հետեւեալ օրը՝ կիրակի, առաւօտեան 11 ժա-
մին, Աւետանայ ա. Աստուածածին եկեղեցում (Ջգրաշէն) մատուցվելու է սուրբ պատա-
րագ եւ կատարվելու է հոգեհանգստեան պաշտաման կարգ զանաւարտին նուիրարեւոյ-
ների նշխեցեալների հոգեկիչատակի համար, եւ կարգացվելու է բոլոր նուիրարեւոյների
անուանական ցուցակը:

1—1

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակի» բաժանորդագրութիւնը.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Արձագանքներ. Նամակ
Գանձակից. Նամակ խմբագրութեան. Նամակ
խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին
լուրեր.—ՀԵՌԱՅԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տը-
պագրութիւն:

«ՄՇԱԿԻ» ԲԱՎԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Այսօրվանից բացում ենք «Մշակի» բա-
ժանորդագրութիւնը առաջիկայ 1901 թը-
ւականի համար:

Ուրախութեամբ յայտնում ենք մեր ըն-
թացողներին, որ խմբագրութիւնը որոշել
է առաջիկայ 1901 թականին հրատա-
րակել «Մշակ» լրագիրը շաբաթը վեց ան-
գամ: Կառավարութեան թոյլտուութեամբ
«Մշակ» լրագիրը իրաւունք ունի հրատա-
րակել մամուլ օր բացի տօներին յաջորդող
օրերից: Այդ հիման վրա «Մշակը» լոյս
չի տեսնի երկուշաբթի օրերը եւ խոշոր
տօների հետեւեալ օրերը:

Ուրեմն լրագիրը սկսած առաջիկայ
յունվարից լոյս կը տեսնի, բացի սովորա-
կան օրերից, նաեւ կիրակի օրերը: Կիրակի-
նորեայ համարները կը կազմվեն նոյն ձևով
ինչպէս եւ միւսները, այն զանազանու-
թեամբ, որ խմբագրութիւնը մտադիր է
այդ համարների մէջ աւելի տեղ տալ գրա-
կան ներթերին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոյն վաճառականական դասակարգի յարմա-
րութիւնն էր մի գլխաւոր պատճառ, որ Թու-
մաս Վանանդեցին ամենից առաջ շտապեց մի
հիմնադր գործ լոյս հանել: Հայ վաճառականը
յարաբերութիւններ ունէր աշխարհի հետաւոր
մասերի հետ, ահադին տարածութիւններ էր
անցնում ծովով եւ ցամաքով, գործ ունէր զա-
նազան ազգերի եւ իգութների հետ: Նրան, ու-
րեմն, հարկաւոր էր աշխարհագրութիւն, հար-
կաւոր էր եւ քարտէզ, որ ցոյց տար ամ-
բող աշխարհը: Վանանդեցին, ինչպէս ինքն
է ասում, այդ պահանջը լրացնելու համար էր
գլխաւորապէս, որ 1695-ին հրատարակեց «Հա-
մատարած Աշխարհացոյցը» անունով քարտէզը,
իսկ հետեւեալ տարին—այդ քարտէզի բացա-
տրութիւնը կամ «Բանալին»: Այդ մեծ, փառա-
ւոր գործը մի ամբողջ գիւտ պէտք է համարել
այն ժամանակվայ մեր մտաւոր աղքատութեան
մէջ: Թէեւ հայ վաճառականն էր նրա երեւան
գալու մի պատճառը, բայց մենք չը պիտի այդ-
պէս մասնաւորեցնէ երեւոյթի նշանակութիւնը,
որովհետեւ այն ամենը, ինչ անվում էր վաճա-
ռականի համար, հաւասար չափով պիտանի եւ
հարկաւոր էր ազգի բոլոր մասերին:

Այժմ էլ, երկու հարիւր տարուց յետոյ, «Հա-
մատարած Աշխարհացոյցը» հիացմունք է պատ-
ճառում տեսնողին: Դա պիտի չէ տախտակների
վրա փորագրած մի մեծ քարտէզ է, որ ներ-
կայացնում է երկրագնդի երկու կէսերը: Ամ-
բող գործը նուրբ է եւ ճաշակով պատրաստ-
ված: Գեղեցիկ են մանաւանդ հին յունական
զիգարանութիւնից վերցրած պատկերները եւ

«Մշակի» ուղղութիւնը եւ ծրագիրը կը
մնան նոյնը, ինչ որ եղել են նրա քանոթութե-
ամեայ գոյութեան ընթացքում: Տարեկան
բաժանորդագիրը կը մնայ նախկին տա-
րուրին:

Բանալով նոր բաժանորդագրութիւնը,
խմբագրութիւնը խնդրում է իր նոր բա-
ժանորդներից վաղօրոք յայտնել իրանց
հասցէները, որպէս զի լրագիրն առաքումը
չը դանդաղի եւ խմբագրութիւնը կարող
դանալ որոշել նոր պահանջով աւելորդ
համարների քանակութիւնը: Հասցէների
տպագրութիւնը ժամանակ է պահանջում,
իսկ նրանց ամենամեծ քանակութիւնը
ստացվում է նոր տարվայ տօների ժամա-
նակ, երբ տպարանները չեն գործում կամ
գործում են մեծ ընդհատումներով: Այդ-
պիսով դժուարանում է նրանց տպագրու-
թեան գործը:

Սկսելով նոր բաժանորդագրութիւնը եւ
յանձն առնելով նոր աշխատանք եւ նոր
ծախքեր, «Մշակի» խմբագրութիւնը լիա-
յոյս է, որ նա կը գտնի հասարակութեան
կողմից նրա մշտական համակրութիւնը եւ
աջակցութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒՆ

Հասկացողութիւնները փոխվում են, հինը
ոչնչանում է, նորը յամառութեամբ գլուխ է

աստղաբանական նկարները, որոնք զարդա-
րում են այդ առաջին հայերէն մեծ քարտէզը:
Նրա վրա տպագրված փոքրիկ ոտանաւոր յի-
շատակարանը ցոյց է տալիս, թէ ով ինչ է ա-
րել մի այդպիսի գործ դուրս բերելու համար:
հրատարակիչը, ի հարկէ, Թովմաս եպիսկոպոսն
է, որ ոչինչ չէ խնայել գործի գեղեցկութեան
համար: փորագրել են Արքիան եւ Պետրոս
Բաժնապէկ (Hadrianus et Petrus Damianus
Schonbeek) եղբայրները, որոնց աշխատակիցը
եղել է Ղուկաս Նուրիշանեանը: Մատթէոսն էլ,
ի հարկէ, ունեցել է իր բաժին աշխատանքը.
քարտէզ տպելը այժմ էլ, երբ այնքան կատա-
րեալգործութիւններ կան, հեշտ բան չէ, բայց
տաճակաւորակ գծուար պիտի լինէր այն ժա-
մանակները, երբ տպագրական գործիքը միայն
մամուլն էր: Եւ իզուր չէ, որ Մատթէոսը
«Բանալի Համատարած Աշխարհացոյցի» գրքի
յիշատակարանում անուանվում է «գրգնեալ»
եւ միակ բուն անունով տպագիր հայոցն:

«Աշխարհացոյցը» ամենագլխաւոր աշխատու-
թիւնը, որ այնքան գեղեցկութիւն եւ վայել-
չութիւն է տալիս ամբողջ գործին, փորագրու-
թիւնն է, որ կատարված է, ինչպէս տեսնում
էք, օտարների ձեռքով: Պարծենալ գրանով
կարող է, ուրեմն, հօլանդական արուեստը,
թէեւ Հօլանդիան զրանից աւելի գեղեցիկ, ա-
ւելի հոչակաւոր գործեր ունի պարծենալու
համար: Հօլանդական փորագրութիւնները հրե-
շակել եւ զարմանալի նրբութեան էին հասցել
Բուրքինս եւ Բեմբրանդտ հանձարեղ նկարիչնե-
րը, նրանք առանձին, ինքնուրոյն դպրոցների
հիմնադիրներ էին եւ նրանց հետեւողները այն-
պիսի կատարելութեան հասցրին փորագրու-
թիւնը, որ ամբողջ Եւրոպայում շատ քիչ մը-
ցակիցներ ունէր Հօլանդիան, այդտեղ շատ
ծաղկած էր եւ քարտէզագրութիւնը: Հօլան-
դական արուեստի եւ մտաւոր հարստութեան
տեսակետից գուցէ այնքան էլ մեծ ու պան-

արծրացնում իր իրաւունքները պաշտպանե-
լու համար: 10—20 տարի առաջ ով կարող էր
մտածել թէ կը լինի այնպիսի դպրոց, ուր ու-
սուցիչը աշակերտի ընդունակութիւնները որո-
շելու համար չի դնի թուանշաններ: Իսկ այժմ
թուանշանների սխառմը հնացած, նոյն իսկ
հակամակաւորական է համարվում, եւ ուս-
սաց ամբողջ ժամուրը զբաղված է այն հարցով
թէ ժամանակ է աշակերտներին ազատել թուա-
նշանների լուծից: Բանից դուրս է գալիս, որ
այդ միտքը Ռուսաստանում ոչ միայն թէ օրիա
է, այլ նոյն իսկ գործնական կենսքի մէջ է
մտցրած: «Русскія Вѣд.» լրագիրը նկարագ-
րում է Մոսկվայի ուսումնարանական շրջա-
նում գտնվող մի օրիորդական դպրոց, որի
մանկավարժական խորհուրդը հինգ տարի ա-
ռաջ մտնել է վերաշինել թուանշանները եւ ուր
աշակերտներին սովորում է աղոթութեամբ,
թէեւ չը գիտէ թէ ինչ է 1-ը կամ 5-ը: Բայց
այստեղ ծագում է հարց. ինչպէս է դպրոցի
վարչութիւնը իմանում աշակերտների մա-
ռաջագիտութեան աստիճանները: Ահա ինչպէս.

Մանկավարժական խորհուրդը ժողովվում
է ամեն ամիս նշանակված օրը՝ յատկապէս
քննելու համար աշակերտութիւնների առաջա-
դիմութիւնը: Դաստիարակները եւ դաս-
տիարակները, նախապէս հաւաքելով ի-
րանց զատարանների դասառուեսներից տեղե-
կութիւններ, այս մասին զեկուցում են տա-
լիս մանկավարժական ժողովին, աւելի եր-
կար խօսելով քիչ առաջագիտութիւն ցոյց
տուող աշակերտների մասին եւ բա-
ցատրելով թէ ինչպէս կարելի է հասկանալ
վատ սովորելու պատճառները եւ ինչ մի-
ջոյններ կարելի է ձեռք առնել: Այդ զեկու-
ցումները քննվում են ամբողջ խորհրդի կող-
մից: Դաստիարակներն ու դաստիարակու-
հիները ժողովի որոշմամբ յայտնում են ծնող-
ներին նրանց երեխաների վատ սովորելու
մասին կամ զրաւոր կերպով, պատուով, կամ
կանչում են նրանց յատկապէս այդ մա-
սին անձամբ խօսելու: Առաջադէմ աշակեր-
տների մասին դպրոցը իր կողմից ծնող-
ներին չէ յայտնում, բայց ծնողները, դպրոցի
կարգերի ծանօթ լինելով եւ իմանալով թէ
երբ է լինում մանկավարժական ժողով, ամեն
ամիս հրաւիրվում են, եթէ ցանկութիւն

ծաղի գործ չէր մեր քարտէզը. բայց ինչ էլ լի-
նի, մենք, հայերս, միայն խորին երախտագի-
տութիւն պիտի դրանք դէպի այն փոքրիկ հայ
ընտանիքը, որ հաստատվելով այդ հիւրասէր
երկրում, վերցնում էր նրա հարստութիւննե-
րից բաժին եւ հայերի համար, հայացնում էր
արուեստի եւ առաջագիտութեան մի մասը:
Միայն այս մեծագործութիւնը բաւական էր
Թովմաս Վանանդեցու եւ նրա ընկերների ա-
նունները երախտապարտութեան եւ անմոռաց
յիշատակութեան արժանացնելու. միայն այս-
քանը բաւական է, որ Նուրիշանեանների տոհ-
մը Ոսկան վարդապետի ետեւից դասվէր ազգի
լուսաւորիչների թուում: Բայց միայն այդ գոր-
ծը չէր վիճակված այդ մարդկանց, կար մի ու-
րիշ նշանաւոր ձեռնարկութիւն էլ, որ լոյս
հանեց «Համատարած Աշխարհացոյցի» հետ
միաժամանակ: Եւ դա Մովսէս Խորենացու
հեղաւոր պատմագրութիւնն էր:

Հարկւր ութսուն եւ երկու տարի էր անցել
այն օրից, երբ առաջին հայերէն գիրքը մտա-
րուտները մամուլի տակ, իսկ Խորենացին
նոր միայն էր արժանանում տպագրութեան:
Ո՛րպիսի անուշադրութիւն: Տպագրվեցան
բազմաթիւ այնպիսի գրքեր, որոնք կարող էին
եւ չը տպագրվել. տպագրվեցան քաղիկոջոնա-
կան անհամ մէճերին հայերէն հատորներ, ու-
րեմն ոչինչ չէին ապացուցանում եւ ոչ ոքին
չէին համոզում. իսկ Խորենացին մոռացված
էր. եւ Թովմաս եպիսկոպոսը վկայում է, թէ
իր ժամանակի հայոց պատմահայրը դժուար
էր ճարվում... Հաղիւ թէ սրանից աւելի պեր-
ճախօս փառաւ լինի այդ խեղճ դարերը բնու-
րոշելու եւ հասկանալու համար: Եթէ մեղա-
նուած լինէր ինքնաճանաչութիւն, եթէ մենք
ստորեկ ու խաւար մի ժողովուրդ չը լինէինք,
Խորենացու պատմագրութեան պէս մի հեղի-
նակութիւնը տպագրական առաջին գործերից
մէկը կը լինէր. բայց մենք «Աղթարքներ»,

ունեն, զնալ դպրոց դաստիարակների ըն-
դունելութեան ժամկէտի եւ ստանալ նրան-
ցից տեղեկութիւններ իրանց երեխաների
մասին: Կայ, սակայն, այն կարգը, որ տա-
րին երկու անգամ, Մենդեան տօներին եւ
ուսումնական տարվայ վերջում, բոլոր ծնող-
ներին խնայ է տրվում թէ ինչ առաջադի-
մութիւն են ցոյց տալիս նրանց երեխաները՝
այսպիսի բովանդակութիւն ունեցող բանիկ-
ներով: «Պատիւ ունեւ յայտնելու ձեզ, մեծ.
պարոն, որ մանկավարժական ժողովը աշա-
կերտուհի (այս ինչի) պարագմունքները
գտնում է բաւարար բոլոր առարկաների
մէջ» կամ «անբաւարար այս ինչ առարկա-
ների մէջ»:

Շատ պարզ ու հասարակ միջոց, որ, սակայն,
այն անագին առաւելութիւն ունի, որ աշա-
կերտը թուանշանի քմահաճութիւնների հետ
չը պիտի կապէ իր ամբողջ բանտը: Հսկողու-
թիւնը դարձեալ իմանում է հսկողութիւն, բայց
այն զանազանութեամբ, որ ամբողջ մանկավար-
ժական ժողովն է քննում աշակերտի առաջա-
դիմութիւնը որոշող նիւթերը, հետեւաբար եւ
ուսուցչի անհատական քմահաճութիւնը, նրա
խառնուածքը, բնատուրութիւնը՝ չեն կարող բա-
ցարձակ դեր կատարել աշակերտի ճակատագրի
մէջ: Տեսնե՛ք թէ այդ «անթուանշան» դպրո-
ցի օրինակը քանի ուրիշ դպրոցներ կը վերց-
նեն: Դա հերթական հարց է այժմ...

Բազում դարձեալ պատրաստվում է այն
տեղագիտական իրաւանցումը, որ կար անցեալ տա-
րին Նոյեմբերի 15-ին պէտք է աճուրդով տըր-
վեն արքունական նաւթային հողեր: Ու հա-
կանալի է, թէ սրբալիս պատրաստութիւններ
են տեսնում ֆոնտանները եւ միլիոնների ա-
խորժակ ունեցողները: Միայն Թիֆլիսում, ա-
սում են, կազմվել են եօթն ընկերութիւններ՝
նաւթահողեր վերցնելու համար. ասում են
նոյն իսկ, որ կայ «փափկասուն» կանանցից
կազմված մի նաւթարդնաբերական ընկե-
րութիւն—մի բան, որ անհաւատալի կը լինէր,
եթէ այնքան բնորոշ չը լինէր մեր ժամանակի
եւ մեր բարեբեր համար: Գործ են դրված ա-
մեն տեսակ միջոցներ: Ներկայումս Բազում
նաւթի գները ընկած են: Պատճառը, մի քա-

«Երազահաններ», եղութական աստուածա-
բանութիւնների մի քանի տպագրութիւններից
յետոյ միայն ձեռք առանք Խորենացուն:

Ձարմանալի ճակատագիր է վիճակված հայոց
Հերոգոսին: Նա երկու տեսակ զգացմունք է
ներշնչել իր գրքով—կամ խորին ատելութիւն ու
հալածանք կամ հիացմունք եւ երկրպագու-
թիւն: Հին տառագրութիւնները ասում են, որ
այդ հայ հեղինակը հանգստութիւն չը գտաւ
նոյն իսկ մահից յետոյ, որ նրա ոսկորները
գետը թափվեցին: Այնուհետեւ նա դասվեց
սուրբերի կարգում, հեղակվեց երկրորդ լու-
սաւորիչ, իսկ մեր օրերում պատմական քըն-
նադատութիւնը նորից աշխատում է նրան
ցած քաշել քարծր պատուանդանից եւ արդէն
այն աստիճանին է հասել, որ պատկերացնում
է այդ մարդուն իբրեւ ապուշ, խարդախ, ստա-
խօս, գող եւ աշխարհաւոր Այդ զարմանալի ճա-
կատագիրը մասամբ հասկանալի է. Մովսէս
Խորենացին մի բուրդովին առանձին, արտա-
կարգ երեւոյթ է մեր ամբողջ անցեալի մէջ:
Քրքերեցէ մեր ամբողջ պատմութիւնը եւ
զուք նրա գրքի պէս մի ուրիշ գիրք չէք գըտ-
նի: Ահա ինչու նա յարուցել է կրքեր—կամ
հիացմունքի կամ ատելութեան կրքեր, եւ եր-
բէք չէ հասկացել այնպէս, ինչպէս արժանի էր:
Խօսել մեր ժամանակներում Մովսէս Խորե-
նացու մասին նշանակում է քրքրել այն հար-
ցը, թէ որ դարի հեղինակ էր նա—հնգերորդ,
ինչպէս ինքն է ասում, թէ ութերորդ կամ
իններորդ, ինչպէս ուզում են ապացուցանել
եւ արդէն ապացուցած են համարում մի քա-
նի ժամանակակից քննադատներ: Բայց մենք
չենք մտնի այդ հարցի մէջ. Խորենացին այն-
պէս, ինչպէս մենք ենք ուզում նայել նրան,
ոչինչ չի կորցնի, եթէ մինչեւ անգամ ութե-
րորդ դարում ապրած լինի Մեզ հետաքրքրո-
ղ պիտի լինի այն, թէ ինչ էր այդ հեղինակը
հայոց գրականութեան, հայ ազգի համար:

Անա այս հռչակաւոր գիրքն էր, որը տղի-տուժիւնն ու վարդապետութեամբ թաղել էին մոռա-ցութեան փոշիներէ մէջ եւ որը Թովմաս Վա-նանդեցիին տպագրութեամբ վերակենդանացրեց
XVII դարի վերջում Թովմասը զգաց, որ
Հայաստանի ազէտն է Խորհնացու գրքը, վի-
ճակված այդ մոռացումը. նա իր համար առան-
ձին երջանկութիւն յայտարարեց այն, որ իր
տպագրական գործունէութեան իրեւ առաջին
պտուղ տալիս է ազգին այդ պատմագրութիւ-
նը: Ընթերցողին ցոյց տալու համար, թէ ինչ է
նոր աշխարհ եկող այդ գանձը, նա դրեց գրքի
վրա մի այսպիսի երկար վերնագիր սեւ եւ
կարմիր տառերով. «Ազգաբանութիւն տոհմին
Յարեթեան, յորինեցեալ ի Մովսիսէ Խորենացւ-
ոյ, յեռանձն վարդապետն եւ յոգնեալախտ ճեր-
թողհօրէ ի ինդրոյ Պայազատապետի Սահա-
կայ Յագորաշենոյ: Հարազատ եւ բուն պատ-
մութիւն նախնեացն առաջնոց, թագաւորաց,
իշխանաց, նախարարաց եւ հայրապետաց Արա-
մեան ազգին Մկեառ ի Հայկ Բաջէ, մինչեւ
յ» Արտաշէր թակաւորն մերս: Երեսն դարմից
նի մի ոտանաւոր ներքող էր նուիրում քեր-
թողհօրը, դնում էր տեղեկութիւններ նրա
մասին եւ ի վերջոյ ազաւում էր ընթերցողնե-
րին սիրոյ եւ մեծարանքի առարկայ դարձնել
ճշգրտահմուտ, այնատասէր, ճշմարիտ գրոյց-
ներ հաւաքող ու յայտնագործող Խորենացուն»
(Չէ չարունակի)

Типографія Грузинск. Т—ва, Большая-Валсская ул., № 27.